



**Հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում տրամադրվող ճաշացուցակը հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պարտադիր տպագրված լինելու վերաբերյալ**

**Հարց**

Հանրային սննդի ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա ո՞ր դեպքում պետք է տպագրված լինի ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, ինչպես նաև փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները):

**Պատասխան**

ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պետք է տպագրված լինի ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, իսկ հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում՝ նաև փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները), իսկ 9-րդ կետի

համաձայն՝ գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան:

ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման N3 հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ կտրոնի վրա օրենսգրքով սահմանված ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, ինչպես նաև գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների) տպագրվում են նախորդ տարվա (2013 թվականից սկսած) արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները), բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ պետք է տպագրված լինի Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան, այն է՝ նախորդ տարվա (2013 թվականից սկսած) արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ